ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020թ. փետրվարի 11-14-ը Ռուսաստանի Դաշնություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝ Կարեն Ալավերդյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ ֆինանսների նախարարության հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա), 2020թ. փետրվարի 11-14

4. Հրավիրող կողմը՝ Եվրասիական Տնտեսական Հանձնաժողով

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Մասնակցություն ԵԱՏՄ Ֆինանսական շուկաների գծով Խորհրդատվական կոմիտեին կից ԵՏՄ անդամ երկրներում աուդիտի, հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների կազմման բնագավառում ծառայությունների մատուցման միասնական շուկայի ձևավորման աշխատանքային խմբի հերթական նիստին:

6. Քննարկված թեմաները՝

- «Եվրասիական տնտեսական միության տարածքում աուդիտորական գործունեության մասին» համաձայնագրի նախագծի վերջնական տարբերակի քննարկում,
- «ԵԱՏՄ անդամ երկրների տարածքում աուդիտորական գործունեության բնագավառում վարչական համագործակցության» համաձայնագրի նախագծի քննարկում,
- ԵԱՏՄ անդամ երկրների տարածքում հաշվապահական հաշվառման բնագավառում ծառայությունների մատուցման միասնական շուկայի ձևավորման հետ կապված հարցերի քննարկում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

- ԵԱՏՄ Ֆինանսական շուկաների գծով Խորհրդատվական կոմիտեին կից ԵԱՏՄ անդամ երկրներում աուդիտի, հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների կազմման բնագավառում ծառայությունների մատուցման

միասնական շուկայի ձևավորման աշխատանքային խմբի հերթական նիստի ընթացքում քննարկվեցին «Եվրասիական տնտեսական միության տարածքում աուդիտորական գործունեության մասին» համաձայնագրի նախագծի ներպետական համաձայնեցման ընթացակարգերի արդյունքում անդամ-երկրներից ստացված առաջարկությունները: Հանդիպման ընթացքում ներկայացրել եմ առաջարկությունների վերաբերյալ ՀՀ ֆինասների նախարարության դիրքորոշումը, այդ թվում նաև՝ որոշ հոդվածների վերաբերյալ անհամաձայնությունների կամ տարակարծությունների հիմնավորումները: Որոշում է կայացվել առաջարկել անդամ-պետություններին ևս մեկ անգամ քննարկել չհամաձայնեցված հոդվածները, որոնցից որոշների վերաբերյալ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կներկայացվի նոր խմբագրություն, իսկ որոշ չհամաձայնեցված հոդվածներ, որպես կողմերի տարաձայնություն, կներկայացվի ԵՏՀ Կոլեգիայի քննարկմանը: Աշխատանքային խումբը քննարկել է նաև «ԵԱՏՄ անդամ երկրների տարածքում աուդիտորական գործունեության բնագավառում վարչական համագործակցության» համաձայնագրի նախագծի լրամշակված տարբերակը, աշխատանքային քննարկման ու մտքերի փոխանակության արդյունքում ձևավորված նոր առաջարկությունները, որոնք կներկայացվեն կողմերի համաձայնեցմանը աշխատանքային նիստի արձանագրությամբ:

- Աշխատանքային խումբը քննարկել է նաև «ԵՏՄ անդամ երկրների տարածքում հաշվապահական հաշվառման բնագավառում ծառայությունների մատուցման միասնական շուկայի ձևավորման հետ կապված հարցերը: Համաձայնություն է ձեռք բերվել հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար մշակել ընդհանուր պահանջներ՝ միասնական շուկայում գործունեության թույլտվության համար, ինչպես նաև սահմանել այն ոլորտները կամ շուկայի սեգմենտները, որտեղ գործելու է միասնական շուկան, որը ընդունելի կլինի բոլոր անդամ-պետությունների համար:
- Առանձին քննարկումներ եմ ունեցել Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության ներկայացուցիչների հետ՝ աուդիտորական գործունեության կարգավորման, մասնագիտացված կառույցների գործունեության, ինչպես նաև աուդիտի որակի հսկողության գործընթացի վերաբերյալ:

8. Հանդիպման արդյունքները և առաջարկությունները

Հանդիպումների ընթացքում, որպես աշխատանքային խմբի անդամ ներկայացրել եմ ՀՀ ֆինանսների նախարության դիրքորոշումն ու առաջարկությունները վերոնշյալ համաձայնագրերի նախագծերում ամրագրված դրույթների վերաբերյալ: Ներկայացրել եմ նաև մեր դիրքորոշումը հաշվապահական հաշվառման բնագավառում միասնական շուկայի ձևավորմանն ուղղված քայլերի վերաբերյալ: Որոշում է կայացվել ԵԱՏՄ հանձնաժողովի աշխատակազմի կողմից ամփոփել քննարկման արդյունքները, լրամշակել վերը նշված համաձայնագրերի նախագծերն ու դրանք վերջնական համաձայնեցման ներկայացնել ս.թ մարտ ամսին կայանալիք տեսակոնֆերանսի ընթացքում:

9. Գործուղվողը

ՀՀ ֆինանսների նախարարության հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության պետ Կարեն Ալավերդյան:

10. Ստորագրությունը, ամսաթիվը **18.02.2020թ.**